



Արու Օդիենդացի.

Կ'ըլլայ : Ընտանիքներ յետին աղքա-  
տոթեան մէջ ինկեր են՝ ըստ օրինի  
հանգուցելց մը վրայ աղօթող քահա-  
նաները վեց ամիս միտով և եղիպտա-  
ցորենով պահելնուն համար :

ՕԴԻԵՆԴԱՑԻՔ

Օդգենդացիք բարի Յուսոյ Գլխոյն  
բնիկ ժողովուրդն են . տարբեր Քափրաս,



ԷՊ ՕԴԴԵՆԴԱԳԻ.

տանցիներէն և սևերէն . մարմիննին բռ .  
վանդակ պարզ մժագոյն է բաց 'ի ա-  
չուըներնուն սպիտակութենէն . պղտի  
գլխով , բայց լայնակատար որ հետզիե-  
տէ կընեղնայ . ուռուցիկ այտերով , խոր-  
աչոփ , տափունչ և տափաշուրթն , սպի-  
տակ ատամունքներով . ձեռուընին և ո-  
տուընին մէկալ անդամոց քով շատ ան-

համեմատ պղտիկ է . ուղղաձև , բարե-  
ձև , և մեծ գծագրութեամբ . մազերնին  
մե . կամ հիւսուած է և կամ ասրի պէս .  
գրեթէ ամենկըն ալ անմօրուա են . կա-  
նանց տգեղութիւնը ամենուն ծանու-  
ցեալ է :

Օդդենդացոց լեզուն , գժբաղդա-  
բար քիչ քննուած , բայց շատ նմանու-

թիւն կը ցուցընէ մողոլ և դաշլուխ լեզուին հետ ասկէց ոմանք զօդգենդացիս ջիս ջինու և կամ Մողոլի գաղթականութիւն կուզեն սեպել:

Օդգենդացիք ցեղ ցեղ բաժնուած են: Տամարացիք ամենէն հիւսիսաբնակներ են: Մեծ Նամագացիք, որ Օրանք գետին հիւսիսային արևելեան կողմը կը բնակին: Փոքր Նամագացիք նոյն գետին հարաւակողմը: Քորանացւոց կամ Քորա-Օդգենդացւոց բնակութիւնը կեղրոնական տեղէ, ընդարձակ և խոտաւէտ: Իրենց վարմանը, հագուստին և իրենց կազմութեան մէջ քաղաքակըր թութեան ընդունակութիւն մը կ'երևայ: Ընդարձակ անապատով մը իրենց անկախութիւնը կը պահեն Եւրոպացւոց մէ: Դէմքերնուն մէջ աղնուականութեան նշյլ մը կը փայլի որ մէկալնոնց վրայ չերևար: Իրենց հարուստ հօտերը և անոնցմով ունեցած հանգստութիւննին զիրենք երջանկացուցած են, ոչ երբէք Պէղյիուանացւոց հետ՝ որ իրենց հիւսիսաբնակ դրացիքն են և ցեղով գաֆրաստանցի, գժտութիւն ունեցած են: Հարաւային արևելեան կողմը կ'իյնան կօնագացիք կամ Շանենագացիք, Նըշանաւոր քան զայլ իրենց գեղեցկութեամբը, և իրենց մտաւոր կարողութեամբը: Ուրիշ շատ ցեղեր ալ կրնայինք յիշել որոնք կամ անհետացած և կամ անհետանալու վրայ են, որչափ որ Եւրոպացի գաղթականութիւն կը դրաւէ այն կողմերը:

Ոլխարի և կամ առիւծի մորթ մը ձգած ետևնին, սեագոյն կամ կարմրագոյն ճարպով մը օծուած, մահակ մ'ալ ձեռուընին, երգելով և պարելով կը թափառին իրենց հօտերուն հետ: Եւրոպացւոց մերձակայութիւնը և անոնց հետ ունեցած շարունակ վերաբերութիւնն իրենց բարուցը վրայ այլայլութիւն մը բերած չէ: Իրենց արդարուց մէկ երկուրիքը կը կտրեն Քօրանացիք և Պօջխանանցիք, Մազերնուն մէջ տեսակ մը զաղիր և պժգալի կենդանի կը բազմանայ՝ զոր յետոյ իրենց կերակուր կ'ընեն: գարձեալ ասոր նը-

ման կենդանի մը ձիուն բաշերուն և կովուն մորթին մէջ կ'աճի, զորոնք սպան նելը իրենց մեծ զուարճութիւն և հաճոյք է: Ասոնք, կ'ըսէ Քոպլ և կը պատմէ ալ թէ՝ հարսանեաց ատեն ամուսնութեան կապը սրբացընելու համար մոդ մը կամ կախարդ մը տապ և աղտեղի ջուր կը սրսկէ ամուսնացընը վրայ Քոուլէն վերջը ուրիշ ճանապարհորդք ալ կը հաստատեն այս բանս: գարձեալ այս արարողութիւնը կատարելով մարդիկ տարեկան տղայոց վրայ՝ զանոնք իրենց ընկերութեան մէջ կ'ընդունին: Բնութեան խառնուածքին պատճառաւ բաղմակնութիւն չունին, ազգապղծութիւնը և չնութիւնը զարհուրելի գործեր կը համարուին: Այլի մը կարգուելու համար մէկ մատին ոսկիները պէտք է որ կոտրտէ Կ'ըսեն թէ բնաւաստուածութեան գաղափար չունին, բայց կախարդութիւնը շատ յաճախած է մէջերնին և տեսակ մը կանանց կրկնոց ունին, զոր սրբազն կենդանուոյ և նաև աստուծոյ տեղ կը դնեն: այս բաներս առջի կարծիքին հակառակ կ'ելլան:

Պօջխամանցիք կամ Պօժէսմանցիք կամ Հուրուսանացիք և ըստ Քօրանացւոց Սաւապացիք (որ իրենց յատուկ անունն է) Օդգենդացւոցմէ հին ժամանակէ ՚ի վեր բաժնուած ճիւղ մ'են: Կրթութիւնը այնչափ ապականեալ և աւրուած է իրենց քով որ մարդ գրեթէ կարծել չկրնար: Իրենց գաղանային, տարտամ և դառն նայուածքը, խառնաշիոթ և նենգժոտ գծագրութիւնը, և բովանդակ իրենց շարժման գործերուն մէջ եղած վարանական կերպը, զիրենք անասնոյ կը նմանեցընէ: Իրենց չափազանց նիհարութիւնը Օդգենդացի բարել և կնիքը դուրս կը ցատքեցընէ: Իրենց մորթին դեղնի զարնելը աշուրներէն վար տեղի կ'իմացուի. և կրակին ծուխէն գրգռուած արցունքը միայն երբեմն երբեմն այն կողմերուն աղտեղութիւնները կը մաքրէ, որ պատի պէս ծեփուած է: Բայց յետ այսր ամենայնի մարդիկ կանանց քով գեղցիք կրնան ըսուիլ, այնչափ ահ-

ուղի է կանանց տեսիլը : Պօշխսմանու-  
հւոյ մը նկարագիրն այս է : Թոյլ, կա-  
խուած և երկլնցած ստինքներ, խո-  
ռոշցեալ և ծիւրեալ թիկունք . ընդ  
հակառակն ցցուած դաւակ : Աղեղը և  
նետերով լցեալ կապարձը ուսերնին ,  
զիսանոցը և գոտին իրենց տեղերը յար-  
մարցուած , ոտուընին կաշի սանտալ-  
ներ , այծու մորթ մը կոնակնին ձգած ,  
ջրամանի տեղ պարպած դրում մը կամ  
յայլեմնն հաւկիթի պատեան մը . քիչ  
մ'ալ խոտ , և երբեմն ալ զանդրամազ  
շուն մը ետեւնին ձգած , թշուառ ծնած ,  
թշուառաբար կեանքերնին կ'անցը-  
նեն . միայնակ կամ պղտի խումբեր  
ձևացած անապատներուն մէջ կը թա-  
փառին , և արմատներով , մրդերով ,  
մընեմն հաւկիթով , մարախով , մեկնե-  
րով , մողէմներով , որդերով , գորտով  
և այլն՝ քաղցերնին կ'անցընեն : Աղքատ ,  
գող և աւազակ , միշտ անզութ , ան-  
յարկ և առանց կառավարութեան , ա-  
ռանց ընկերական կերպարանք մը ու-  
նենալու , և առանց հասարակաց շահը  
և օգուտը մտածելու եղեր են ինչուան  
հիմա , և ո գիտէ , արդեօք երբ պիտի  
ելլան այս վիճակէն : Հին ատենէ ՚ի վեր  
եւրոպացւոց գաղթելէն առաջ ալ , ան-  
հաշտ ատելութեան առարկայ եղած  
են իրենց դրացի ազգաց . իսկ եւրոպա-  
ցիք փոխանակ հալածելու զանոնք՝ ի-  
րենց մերձակայները կը ժողվեն , իրենց  
ունեցածէն առատութեամբ մաս կը հա-  
նեն որպէս զի ընտանեցընեն , և կրթեն :  
Սաապացի մը բաւաւական է զօդենդացին  
սարսափեցընելու համար . Ակրիկից  
հարաւարնակ ժողովրդոց մէջէն թիւ-  
նաւոր նետեր գործածողները միայն ա-  
տուկ են . անապատներուն մէջ երկա-  
թախառն ժայռերու ետև պահութասծ  
անցաւորները կը թակարդենիրենց զէն-  
քովը : Իրենց արշաւանաց և գորսութեան  
ատենը գիշերներն են . կը յարձըկին  
կը յափշտակին պաճարները , և իրենց  
անմատչելի լեռանց վրայ կ'ապակինին :

Ամեն վայրենի ցեղ առանձին բար-  
բառ ունի , և գարձեալ ամեն առաջ-  
նորդ , լեզուն փոխել և կամ առջինը այ-

լայլել կը ջանայ . ասկէց բարբառներու  
անթիւ շատնալ մը կայ որով վրանին  
քննութիւն ընելը գրեթէ անհնարին է :  
Հին ճանապարհորդաց յիշատակած բա-  
ները հիմա չեն լսուիր . և ինչպէս որ  
կ'երեայ ամենայն ցեղ , ինչուան նաև ա-  
մենայն ընտանիք կերպ կերպ դար-  
ձուածքներ և կերպ կերպ ըսուածներ  
կը հնարեն դրացիներէն անիմանալի ըլ-  
լալու համար : Պարոն Լիհենշդայն Օդ-  
դենդացւոց լեզուին հնչմանը մէջ այս  
բաները դիտած է . երագ , խիստ , և հե-  
ծեծական ձայններու յաճախութիւն մը ,  
կուրծքին խորերէն հագագային հընչ  
մամբ արտաքերուած , բայց բերնին մէջ  
մասնաւոր լեզուի շարժմամբ մը քիչ մը  
կակղցած . եօիշ , աւած և օիշ օիշ երկ-  
բարբառներու շատութիւն մը և ընդ-  
հանրապէս խօսից գրեթէ միշտ ինկ  
վանկով վերջանալը , զոր դողդոջուն  
ձայնով մը կը հնչեն . այս լեզուին կափ-  
կափելուն մէջ իրեք ձայնի աստիճան  
կայ մին քան զմիւան ուժով զորոնք հա-  
նելը շատ կը դիւրացնէ իրենց գործա-  
րանաց շէնքը :

Օդդենդացւոց մեծ մասը Անգլիա-  
ցւոց հպատակ են .

Երջանիկ լնտանիք մը .

Կրկիլենցոն անուամբ եօթը եղբարք  
կային , որոց ամենէն պղտիկը Յովիչան-  
նէն էր : Ասոնցմէ հինգը ամուսնացած  
և որդւոց տէր էին , և մէջերնին ումանկը  
կատաղի և բարկացող մարդիկ էին : Սա-  
կայն Յովիչաննէսին ազդեցուիլ այնչափ  
մեծ էր իւր եղբարցը վրայ , որ հօրեր-  
նուն մահուընէն վերջն ալ մէկ տան մէջ  
կեցան իրենց կանանց և զաւկըներով  
մէկտեղ՝ վերջի աստիճան միաբանու-  
թեամբ և առանց տժգոհութեան ապ-  
րելով իրարու հետ : Իւրաքանչիւր կին  
իւր առանձին աղախինը ունէր , թէպէտ  
և ուրիշ աղախիններ ալ կային որոնք  
սեղան գնելու , լամ լոււալու և ուրիշ  
տնական աշխատութիւնները ընելու կը  
ծառայէին : Մէկմէկ շաբաթ այս կնիկ-